Ն Ե Ր Դ Ր Ո Ւ Մ Ա Յ Ի Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

«Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարան Բարձրագույն մասնագիտական կրթության պետական ուսումնական հաստատություն»

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2022

I. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարան Բարձրագույն մասնագիտական կրթության պետական ուսումնական հաստատությունը» (այսուհետ՝ Համալսարան) ստեղծվել է 1997թ. Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև կնքված միջկառավարական համաձայնագրի հիման վրա:

Համալսարանի գրանցման վկայականի համարն է 03 Ա 081045:

1.1. Կազմակերպության նպատակները և խնդիրները

Համալսարանի նպատակներն են.

Ընդլայնել համալսարանին կից «Ուսմունք» դպրոցի կրթական, ուսումնա-մեթոդական գործունեությունը, էապես ավելացնել սովորողների թվաքանակը:

Համալսարանի խնդիրներն են.

Մեծացնել «Ուսմունք» դպրոցի լսարանային ֆոնդը, սպորտային տարածքները, ստեղծել ժամանակակից ուսումնական և ռոբոտաշինական լաբորատորիաներ, ֆաբլաբ, մասնագիտացված լսարաններ: Համալսարանին կից Ուսմունք դպրոցի գծով ներդրումային ծրագրի իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև ՀՌՀ 2020-2022թթ. Զարգացման ծրագրով նախատեսված Ուսմունք դպրոցում երկու հոսքերի, այն է՝ ֆիզիկա-տեխնիկական և կենսաքիմիական հոսքերի բացմամբ, որը ենթադրում է աշխակերտների համակազմի ավելացում, և որպես հետևանք, անհրաժեշտ

լսարանային ֆոնդի, համապատասխան ուղղվածության լաբորատոր բազայի ստեղծում եղած կլաբորատոր բազայի արդիականացում և վերազինում, գրադարանային ֆոնդի ընդլայնում (ուսումնական, ուսումնամեթոդական գրականության գծով) և այլն:

1.2. Կազմակերպության գործունեության իրավական հիմքերը

Համալսարանը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Միջկառավարական համաձայնագրով, Համալսարանի կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

Համալսարանը աշխատողների միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

1.3 Կազմակերպությունում առկա մարդկային ռեսուրսներն են.

1. Դասախոսական անձնակազմ - 699,
2. Վարչական անձնակազմ - 204,
3. Ուսումնաօժանդակ անձնակազմ - 75:

1.4. Կազմակերպության գործունեության ոլորտը

Համալսարանի գործունեության ոլորտներն են՝

1. Կրթություն,
2. Գիտություն,
3. և այլն:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

2.1. Ծրագրի նպատակը

Սույն ծրագրի իրականացման համար հիմք է հանդիսացել՝

1. Համալսարանին կից գործող «Ուսմունք» դպրոցի հետագա զարգացման անհրաժեշտությունը:

2.1. Ծրագրի իրականացման համար ֆինանսական աղբյուրները

Սույն ծրագրի շրջանակներում առաջիկա 3 (երեք) տարում կազմակերպության գործունեության կազմակերպման համար ֆինանսական աղբյուրներ են հանդիսանում.

1. Համալսարանի Զարգացման ծրագրի շրջանակներում՝ Ռուսաստանի Դաշնության բյուջետային միջոցները:
2. Նախատեսվող ներդրումների ծավալը 3 (երեք) տարվա կտրվածքով կկազմի 350 մլն. ՀՀ դրամ:

2.3. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումները

Սույն ծրագրի շրջանակներում առաջիկա 3 (երեք) տարում Համալսարանը նախատեսում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1. Շենք շինությունների (ուսումնական մասնաշենքերի) կապիտալ վերակառուցում և վերանորոգում,

2. Տարածքի բարեկարգում:

Նախատեսվելիք ներդրումների ժամանակացույց՝

Տարեթիվը	2022	2023	2024	Ընդամենը
Գումարը (մլն. ՀՀ դրամ)	115	117	118	350

2.4. Ծրագրի իրականացման ակնկալվող արդյունքը

Սույն ծրագրի միջոցառումների իրականացման արդյունքում ակնկալվում է Համալսարանին կից գործող «Ուսմունք» դպրոցի ընդլայնում, աշակերտների թվաքանակի զգալի աճ:

ԲՄԿ ՊՈՒՀ Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր **Ա. Դարբինյան**